ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հունվար ամսվա վերջի դրությամբ)









2022թ. հունվարի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 479.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.1%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 7.7%-ով և 27.5%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 252.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 9%-ով և 29.6%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 227 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.3%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 12.4%-ով և 2.3%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 282.6 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.6%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 15.7%-ով և 26.5%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8 մլրդ 812.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 17.1%-ով և 28.6%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 470.4 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.8%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 5.9%-ով և 3.1%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 984.7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 3.4%-ով և 18.5%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 267.8 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.2%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 25%-ով և 66.4%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 227 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.3%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 12.4%-ով և 2.3%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 185 մլն. ԱՄՆ դոլար, չփոփոխվելով 2021 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 11.1%-ով և 17.5%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 2 մլրդ 627,2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.7%-ով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 34.3%-ով և 65%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 470.4 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.8%-ով, 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 5.9%-ով և 3.1%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 462.7 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.4%-ով, 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 3.7%-ով, իսկ 2020թ. հունվարի 31-ի նկատմամբ աճելով 4.3%-ով:

2022թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.56%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.18 տոկոսային կետով, 0.42 տոկոսային կետով ավել է 2021թ. հունվարի 31-ի ցուցանիշից և 2.23 տոկոսային կետով ավել է 2020թ. հունվարի 31-ի ցուցանիշից,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.07%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0.17 տոկոսային կետով, 2021թ.հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է 0.35 տոկոսային կետով, իսկ 2020թ.հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է 2.13 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.37%, այսինքն հավասար է 2022թ. դեկտեմբերի դեկտեմբերի 31-ի ցուցանիշին, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի ցուցանիշների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.07 և 0.1 տոկոսային կետերով:

2022թ. հունվարին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 8.97 մլրդ. դրամ, ինչը 2021թ. և 2020թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 6.66 և 5.93 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 0.77 մլրդ. դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.56 մլրդ դրամով, իսկ և 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.57 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 8.2 մլրդ. դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6.1 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 2.52 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2022թ. հունվարին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 24.46 մլրդ. դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 17.98 և 4.61 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 30.09 մլրդ. դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 15.45 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 4.98 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -5.63 մլրդ. դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2.53 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.37 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվարին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 3.41 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 14.1%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 57.1%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 13.81 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 16.6%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 23.4%-ով,

3) ստացվել են 2.18 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 101.9%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 68.7%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 17.22 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 16.1%-ով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 28.3%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2022թ. հունվարի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 245.3 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 36.4, 269.6 և 541.2 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3754 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 7 օրով, 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ՝ 186 օրով, իսկ 2020թ.հունվարի 31-ի համեմատությամբ ավել է 49 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 4.74%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.06 տոկոսային կետով, 2021թ հունվարի 31-ի համեմատությամբ՝ 0.42 տոկոսային կետով, իսկ 2020թ. հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է 0.13 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. հունվարի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.06%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.14 տոկոսային կետով, 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ փոքր է 0.02 տոկոսային կետով, իսկ 2020թ.հունվարի 31-ի համեմատությամբ մեծ է 0.33 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 8.9%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.21 տոկոսային կետով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 1.97 և 2.08 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 90.04%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.35 տոկոսային կետով, իսկ 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 1.95 և 2.41 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. հունվար ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել 8.38 տարի: Այս ցուցանիշը 2021թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.33 տարով, իսկ 2020թ. ցուցանիշից՝ 0.69 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 9.35%, որը 2021թ. և 2020թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 1.37 և 2.68 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. հունվարի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.05%, լողացող տոկոսադրույքով՝ 16.95%: Ընդ որում, 2022թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. հունվարի 31-ի ցուցանիշօց ավել է 2.57 տոկոսային կետով, իսկ 2020թ. հունվարի 31-ի ցուցանիշից պակաս է 0.87 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. հունվարի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 70.19%, ներքին պարտք՝ 29.81%: Ընդ որում, 2022թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021 և 2020 թվականների հունվարի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 2.81 և 6.59 տոկոսային կետերով: